ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 314 – Ա 23 օգոստոսի 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետի, <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով, <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով

կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի 4112 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսված միջոցների հաշվին 2019 թվականի հուլիս ամսվա ընթացքում հատուկ առաջադրանքներն և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատողներին պարգևատրել՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումները:

ՄԱՐԶՊԵՏ՝ Digitally signed by GAGIK SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Գավառ